600.0058.20.03.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2019 թվականի №58Ա

ք. Երևան

«ՋՈՒՐԼՈՒՅՍ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2015 թվականի նոյեմբերի 18-ի «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №386Ա որոշմամբ «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0583 լիցենզիան (այսուհետ՝ ԼԷ №0583 լիցենզիա),

բ) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2017 թվականի մարտի 16-ի №1/18.2/10579-17 գրությամբ Հանձնաժողովին տեղեկացրել է, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2017 թվականի մարտի 9-ի №66-Ա հրամանով (այսուհետ՝ Հրաման) Ընկերությանը 2012 թվականի հոկտեմբերի 12-ին տրված №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման հայտը մերժվել է,

գ) ի պատասխան Հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 14-ի №ՌՆ/3.2-42/243-17 գրության՝ Նախարարությունը 2017 թվականի մայիսի 24-ի №1/18.2/11144-17 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը 2017 թվականի մայիսի 18-ին հայց է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ Հրամանն անվավեր ճանաչելու պահանջով (վարչական գործ՝ №ՎԴ/4421/05/17),

դ) Նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի №4/18.2/40212-18 գրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2018 թվականի մարտի

21-ի որոշմամբ №ՎԴ/4421/05/17 վարչական գործի վարույթը կարճվել է՝ վեճը դատարանում քննության ենթակա չլինելու հիմքով,

ե) Հանձնաժողովը, հաշվի առնելով Նախարարության 2018 թվականի դեկտեմբերի 7-ի №4/18.2/40212-18 գրությունը, ինչպես նաև «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2018 թվականի դեկտեմբերի 18-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ վերջինիս լիցենզավորված գործունեությունը Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան իրականացնելու փաստի ուսումնասիրության նպատակով,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2018 թվականի դեկտեմբերի 26-ի և 28-ի գրություններով հայտնել է, որ տեղեկացնելով կայանի կառուցման խոչընդոտների մասին, 2012 թվականի հոկտեմբերի 12-ի №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու հայտով դիմել է Նախարարություն, որը Հրամանով մերժվել է: Ընկերությունը նշել է նաև, որ Նախարարությունը ցանկանում է իր ջրօգտագործմամբ սահմանված ջրառի նիշով մեկ այլ ընկերության տրամադրել ջրօգտագործման թույլտվություն, որի պարագայում չի ապահովվի էկոլոգիական թողքը: Ընկերությունը հայց է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Նախարարության՝ Հրամանն անվավեր ճանաչելու և Նախարարությանը բարենպաստ վարչական ակտի ընդունում պարտավորեցնելու պահանջներով: Վարչական դատարանի 2018 թվականի մարտի 21-ի որոշմամբ վարչական գործի վարույթը կարճվել է: Մեջբերելով նշված գործով դատարանի եզրահանգումները՝ Ընկերությունը պնդում է՝ քանի որ ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման և դադարեցման հարցերը կարգավորված են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), վարչական մարմինը որևէ գործառույթ չունի այդ հարցի կարգավորման առնչությամբ, ինչից ելնելով էլ դատարանը գտել է, որ գործը դատարանում քննության ենթակա չէ: Հետևում է, որ գերակա է օրենքի դրույթը և, փաստորեն, Հրամանով որևէ հարցի լուծում չի տրվել, մասնավորապես, ջրօգտագործման թույլտվությունը դրանով չէր կարող դադարեցված ճանաչվել: Ընկերությանը ԼԷ №0583 լիցենզիան տրամադրվել է մինչև 2032 թվականի նոյեմբերի 28-ը գործողության ժամկետով (կառուցման ժամանակահատված՝ մինչև 2019 թվականի նոյեմբերի 28-ը), ուստի №000165 ջրօգտագործման թույլտվությունը Օրենսգրքի 33-րդ հոդվածին համապատասխան համարվում է երկարաձգված մինչև 2032

թվականի նոյեմբերի 28-ը: Ընկերությունը պնդել է նաև, որ ջրօգտագործման թույլտվությամբ ստացված իրավունքը 3 տարի անընդմեջ չօգտագործելը կրել է բացառապես օրինական բնույթ, ինչի համար առկա են համապատասխան հիմնավորումներ: Որպես այդպիսին Ընկերությունը նշել է, որ համայնքի ղեկավարը տարբեր պատճառներով չի տրամադրել «Իջևան-1» փոքր հիդրոէլեկտրակայանի շինարարության թույլտվությունը, ինչի հետևանքով Ընկերությունը հնարավորություն չի ունեցել կառուցել կայանը և դիմել է դատարան՝ համայնքի ղեկավարին շինարարության թույլտվության տրամադրում պարտադրելու պահանջով: Հաշվի առնելով նշվածը՝ Ընկերությունը խնդրել է ջրօգտագործման թույլտվության օգտագործումը համարել օրինական, քանի որ առանց շինարարության թույլտվության չէր կարող կառուցել փոքր հիդրոէլեկտրակայանը,

է) Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ Օրենսգրքի և Նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կանոնադրության համաձայն՝ ջրօգտագործման թույլտվությունը տրամադրում, կասեցնում, փոփոխում և չեղյալ է համարում գործակալությունը, և հիմք ընդունելով Օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածները, վարչական վարույթի շրջանակում փոխօգնության կարգով 2019 թվականի հունվարի 16-ի №ՄՍ/2.2-21/40-19 գրությամբ դիմել է Նախարարություն՝ ներկայացնելով հարցի վերաբերյալ Ընկերության փաստարկները և խնդրելով հայտնել, թե արդյոք Ընկերությանը տրամադրված 2012 թվականի հոկտեմբերի 12-ի №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը Օրենսգրքի 33-րդ հոդվածի 4-րդ պարբերության համաձայն համարվում է երկարաձգված, թե Օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դադարեցված: Միաժամանակ, հիմք ընդունելով Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը և 2-րդ մասը՝ 2019 թվականի հունվարի 16-ից Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է 30 օրով,

ը) Հանձնաժողովը, հաշվի առնելով Օրենքով ամրագրված վարչական վարույթի իրականացման ժամկետները, ինչպես նաև Հանձնաժողովի որոշման նախագիծը նիստի քննարկման ներկայացնելու նորմատիվ կարգավորումներով սահմանված վերջնաժամկետը, Նախարարությանը կրկին խնդրել է տրամադրել 2019 թվականի հունվարի 16-ի ՄՍ/2.2-21/40-19 գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը,

թ) ի պատասխան Հանձնաժողովի 2019 թվականի հունվարի 16-ի №ՄՍ/2.2-21/40-19 գրության, Նախարարությունը 2019 թվականի փետրվարի 12-ի №4/18.2/4056-19 գրությամբ, մեջբերելով Օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին պարբերությունը, հայտնել է, որ Հրամանով

մերժվել է Ընկերության N000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման հայտը,

ժ) Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 15-ին հրավիրված դռնբաց նիստում Նախարարության ներկայացուցիչը հայտնել է, որ Նախարարությունը չի ուսումնասիրել ջրօգտագործման թույլտվության իրավունքի չօգտագործման օրինական կամ ոչ օրինական լինելու հանգամանքը, ինչից ելնելով՝ Ընկերության ներկայացուցիչը խնդրել է Հանձնաժողովին հետաձգել հարցի քննարկումը՝ հնարավորություն ընձեռելով դիմել Նախարարություն՝ վերը նշված հանգամանքի քննարկման խնդրանքով: Հաշվի առելով նշվածը՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով Օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, 10 օրով երկարաձգվել է Ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից հարուցված վարչական վարույթի ժամկետը,

ժա) Ընկերությունը 2019 թվականի փետրվարի 19-ի գրությամբ հայտնել է, որ Նախարարարություն ներկայացված նույն ամսվա 18-ի գրությամբ խնդրել է անվավեր ճանաչել Հրամանը, Ընկերության ջրօգտագործման թույլտվության իրավունքի չօգտագործումը համարել օրինական և Օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն՝ նշված թույլտվության գործողության ժամկետը համարել երկարաձգված,

ժբ) Հանձնաժողովը 2019 թվականի փետրվարի 20-ի №ՄՍ/2.3-71/225-19 գրությամբ խնդրել է Նախարարությանը ներկայացնել տեղեկատվություն Նախարարին ուղղված՝ Ընկերության սույն թվականի փետրվարի 18-ի գրությամբ բարձրացված հարցերի, այդ թվում՝ Ընկերությանը տրամադրված 2012 թվականի հոկտեմբերի 12-ի №000165 ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը Օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն երկարաձգված կամ Օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն՝ դադարեցված համարվելու վերաբերյալ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ մինչև հիշյալ հարցերի առնչությամբ Նախարարության դիրքորոշման ստացումը անհնարին է Հանձնաժողովի կողմից Ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից հարուցված վարչական վարույթի արդյունքում վերջնական ակտի կայացումը,

ժգ) Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 25-ին հրավիրված դռնբաց նիստում, հաշվի առնելով, որ դեռևս ներկայացված չէ Նախարարության պատասխանը Ընկերության 2019 փետրվարի 18-ի և Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 20-ի №ՄՍ/2.3-71/225-19 գրությունների վերաբերյալ և չի ապահովվել Նախարարության ներկայացուցչի մասնակցությունը, Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը երկարաձգվել է ևս 10 օրով,

ժդ) Հանձնաժողովի 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 11^{00}-ին հրավիրված դռնբաց նիստում, հաշվի առնելով բարձրացված հարցերի վերաբերյալ Նախարարության դիրքորոշման բացակայության հանգամանքը, Օրենքի 74-րդ հոդվածը, համաձայն որի՝ վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը (տվյալ դեպքում՝ Հրամանը), և այն, որ մինչև Նախարարության դիրքորոշման ստացումը անհնարին է Հանձնաժողովի կողմից ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից հարուցված վարչական վարույթի արդյունքում վերջնական ակտի կայացումը, փաստվել է փոխօգնության կարգով կրկին Նախարարություն դիմելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում ևս 30 օրով երկարաձգվել է Ընկերության նկատմամբ հարուցված վարչական վարույթի ժամկետը,

ժե) Նախարարության կողմից 2019 թվականի մարտի 11-ին, ժամը 17^{00}-ի սահմաններում Հանձնաժողով մուտքագրված գրությամբ ներկայացվել է Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարչական բողոքն առանց քննարկման թողնելու մասին» №52Ա հրամանը, որով Ընկերության՝ Հրամանն անվավեր ճանաչելու, Ընկերության ջրօգտագործման թույլտվության իրավունքը չօգտագործելն օրինական համարելու և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 33-րդ հոդվածի համաձայն Ընկերության ջրօգտագործման թույլտվության իրավունքի գործողության ժամկետը երկարաձգված համարելու մասին դիմումը, Օրենքի 71-րդ հոդվածի 2-րդ մասի և 73-րդ հոդվածի 3-րդ մասի հիմքերով, թողնվել է առանց քննարկման,

ժզ) Ընկերությանն ուղղված Նախարարության 2019 թվականի մարտի 13-ի №5/18.2/1800133-19 գրությամբ հայտնվել է, որ 2016 թվականի հոկտեմբերի 17-ին Նախարարություն ներկայացված Ընկերության ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետի երկարաձգման հայտի առնչությամբ կատարված ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Ընկերության կողմից կայանի կառուցման նպատակով որևէ շինարարական աշխատանք չի կատարվել, Ընկերությանը ջրօգտագործման թույլտվությամբ տրված իրավունքը չի օգտագործվել, հետևաբար ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ, Հրամանի համաձայն՝ 2012 թվականի հոկտեմբերի 12-ին Ընկերությանը տրված №000165 ջրօգտագործման թույլտվության ժամկետի երկարաձգման հայտը մերժվել է: Հրամանը բողոքարկվել է դատական կարգով. 2018 թվականի մարտի 21-ին վարչական դատարանը վարչական գործի վարույթը ըստ հայցի՝ «ՋՈՒՐԼՈՒՅՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ բնապահպանության նախարարության

բարենպաստ վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին կարճել է: Նույն գրությամբ Նախարարությունը, մատնանշելով Օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և 50-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետերը, Ընկերությանը տեղեկացրել է նաև, որ Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի №52Ա հրամանով Ընկերության վարչական բողոքը թողնվել է առանց քննարկման,

ժէ) Ընկերությունը 2019 թվականի մարտի 18-ին և 20-ին ներկայացված գրություններով տեղեկացրել է Հանձնաժողովին, որ հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան ընդդեմ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ խնդրելով ճանաչել Ընկերության և Նախարարության միջև ջրօգտագործման թույլտվությունը օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու իրավահարաբերության առկայությունը, որպես հետևանք՝ ուժը կորցրած ճանաչել Հրամանը և Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի №52Ա հրամանը, որը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի սույն թվականի մարտի 20-ի որոշմամբ ընդունվել է վարույթ (վարչական գործ №ՎԴ2/0075/05/19),

ժը) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1 հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան կարող է դադարեցվել էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձի՝ տվյալ կայանի համար տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն ուժը կորցրած ճանաչվելու կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կամ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա,

ժթ) Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է կասեցնել վարչական վարույթը, եթե անհնարին է տվյալ վարույթի արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև սահմանադրական, վարչական, քաղաքացիական կամ քրեական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը,

իա) վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհնարին է դրա արդյունքում ակնկալվող վարչական ակտի ընդունումը մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում քննվող №ՎԴ2/0075/05/19 վարչական գործով (ըստ Ընկերության հայցի ընդդեմ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության՝ Ընկերության և Նախարարության միջև ջրօգտագործման

թույլտվությունը օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու իրավահարաբերության առկայության ճանաչման և, որպես հետևանք՝ Հրամանը և Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի №52Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջների մասին) վերջնական դատական ակտի կայացումը՝ հաշվի առնելով այն, որ «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1 հոդվածի 2-րդ կետի «դ» ենթակետի համաձայն ԼԷ №0583 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու համար հիմք է հանդիսանում Հրամանը, որն էլ ներկայումս վիճարկվում է դատական կարգով, և

հիմք ընդունելով Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կասեցնել Ընկերության նկատմամբ 2018 թվականի դեկտեմբերի 18-ից հարուցված վարչական վարույթը՝ մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում քննվող №ՎԴ2/0075/05/19 վարչական գործով (ըստ Ընկերության հայցի ընդդեմ Նախարարության՝ Ընկերության և Նախարարության միջև ջրօգտագործման թույլտվությունը օրենքով սահմանված կարգով երկարաձգված լինելու իրավահարաբերության առկայության ճանաչման և, որպես հետևանք՝ Հրամանը և Նախարարի 2019 թվականի մարտի 7-ի №52Ա հրամանը անվավեր ճանաչելու պահանջների մասին) վերջնական դատական ակտի կայացումը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
20 մարտի 2019թ.